Հավելված 7
<<ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/11>>* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

<<ՆԻԿՈԼԱՅ ՆԱՍԻԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԿ>>ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԽՏՈՐՈՇԻՉ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/11-2>>

ք. Նոյեմբերյան <<27 >>մարտ 2018թ.

<<Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>>ՓԲԸ -Ն, ի դեմս տնօրեն Գարունիկ Ղուշչյանի, որը գործում է <<Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>> ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Վիոլա>>ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Մեժլումյանի, որը գործում է <<Վիոլա>>ՍՊԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.1.9 Ընդունել ապրանքը միայն համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 268 704 (երկու հարյուր վաթսունութ հազար յոթ հարյուր չորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու

---

[1] *Եթե Վաճառողի կողմից գնայինառաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Օրենսդրությունե բաժնի ,Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
<< Նիկոլայ Նասիբյանի անվան
Նոյեմբերյանի ԲԿ>>ՓԲԸ
Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ
բանկ>>ՓԲԸ,Նոյեմբերյանի մասնաճյուղ
Հ/Հ 220155140084000
ՀՎՀՀ՝ 07404792

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
"Վիոլա" ՍՊԸ
ՀՀ ք.Երևան,Ավան Աճառյան փող.
2-րդ նրբ. թիվ3
" Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026

Տնօրեն՝ ----------
/ստորագրություն/

Ա.Մեժլումյան

Հավելված N 1
<<27>> <<մարտ>>2018 թ. կնքված
<<ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/11-2>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	33211120	Գլյուկոզայի հավաքածու	Robonik Pvt. Ltd Հնդկաստան	Գլյուկոզա 2X100 մլ, ներառյալ ստանդարտ R1-2 X100 մլ Եռքլորքացախաթթու 3%, 100մլ	տուփ	3360	16 800	5	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
2	33211230	Սիֆիլիսի թեստ-հավաքածու RPR կարբոն 100ts	LabCare Diagnostics Ltd Հնդկաստան	ռեագենտ 2 մլ C-բացասական կոնտրոլ 0.4 մլ C+դրական կոնտրոլ 0.4մլ Խառնիչ ձողիկներ-100 հատ Պլաստիկ պլայդեր թեստի համար	տուփ	5400	21 600	4	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
8	33211110	Մեզի անալիզի թեսթ	DFI Co. Ltd Հարավային Կորեա	Մեզի անալիզի թեսթ 100 թեստ	տուփ	5592	5 592	1	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
9	33211160	Կրեատինին	PZ Cormay S.A. Լեհաստան	Կրեատինինի որոշման թեստ-հավաքածու,2 X 120մլ, 240թեստ, ներառյալ ստանդարտ, կոլորիմետրիկ ծայրակետ և կինետիկ մեթոդ	տուփ	4500	13 500	3	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
10	33211150	Միզանյութի հավաքածու	PZ Cormay S.A. Լեհաստան	Միզանյութ 2x100 մլ կինետիկ ,ներառյալ ստանդարտ, UREA UV	տուփ	4590	18 360	4	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների

											համար
15	33211190	Ռեագենտ անտի A	LabCare Diagnostics Ltd Հնդկաստան	Ռեագենտ անտի A –A 10մլ/200 թեստ	մլ	95	1 900	20	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
16	33211200	Ռեագենտ անտի B	LabCare Diagnostics Ltd Հնդկաստան	Ռեագենտ անտի B - B 10մլ/200 թեստ	մլ	95	1 900	20	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
17	33210000	Ռեագենտ անտի AB	LabCare Diagnostics Ltd Հնդկաստան	Ռեագենտ անտի AB - AB 10մլ/200 թեստ	մլ	115	2 300	20	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
18	33211220	Ռեագենտ անտի D	LabCare Diagnostics Ltd Հնդկաստան	Ռեագենտ անտի D Սուպեր, 10 մլ/200 թեստ	մլ	166	3 320	20	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
20	33210000	Հեպատիտ C	LabCare Diagnostics Ltd Հնդկաստան	Հեպատիտ C HCV Test	հատ	144	14 400	100	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
22	33211300	Կալցիումի հավաքածու	PZ Cormay S.A. Լեհաստան	Կալցիում (CA) 240 թեստ, (2 X120ml), ներառյալ ստանդարտ	տուփ	4600	5 520	1	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
23	33210000	Ալբումինի հավաքածու	PZ Cormay S.A. Լեհաստան	Ալբումինի հավաքածու 240 թեստ	տուփ	4560	9 120	2	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
24	33210000	ԱԼՏ հավաքածու	PZ Cormay S.A. Լեհաստան	ԱԼՏ, Ալանինամինոտրանսֆերազի կինետիկ եղանակով որոշման թեստ-հավաքածու, 60մլ	տուփ	1740	3 480	2	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
25	33210000	ԱՍՏ հավաքածու	PZ Cormay S.A. Լեհաստան	ԱՍՏ, Ասպարտատամինոտրանսֆերազի կինետիկ եղանակով որոշման	տուփ	1740	3 480	2	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս,

				թեստ-հավաքածու, 60մլ							հուլիս ամիսների համար
27	33211130	Խոլեստերոլ HDL 50մլ	Robonik Pvt. Ltd Հնդկաստան	Ալֆա-լիպոպրոտեիդներ, HDL նստեցնող ռեագենտ, 50մլ, ներառյալ ստանդարտ	տուփ	4992	4 992	1	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
30	33210000	Т4 -Թիրոքսին	ООО «Научно-производственное объединение «Диагностические системы» Ռուսաստանի Դաշնություն	Т4 -Թիրոքսին	տուփ	23880	23 880	1	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
31	33210000	□□Г թիրեոտրոպ հորմոն	ООО «Научно-производственное объединение «Диагностические системы» ООО «Научно-производственное объединение «Диагностические системы» Ռուսաստանի Դաշնություն	ТТГ թիրեոտրոպ հորմոն	տուփ	23400	23 400	1	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
32	33210000	Т3 -Թիրոքսին	ООО «Научно-производственное объединение «Диагностические системы» Ռուսաստանի Դաշնություն	Т3 -Տրիյոդթիրոնինի	տուփ	23880	23 880	1	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
33	33210000	Ցիտոմեգալովիրուս	ООО «Научно-производств	Ցիտոմեգալովիրուս	տուփ	26880	26 880	1	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս,

			енное объединение «Диагностич еские системы» Ռուսաստանի Դաշնություն								հունիս, հուլիս ամիսների համար
34	33210000	Խլամիդիա	ООО «Научно-производств енное объединение «Диагностич еские системы» Ռուսաստանի Դաշնություն	Խլամիդիա	տուփ	31920	31 920	1	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար
36	33210000	Ալֆա Ամիլազան	PZ Cormay S.A. Լեհաստան	Ալֆա Ամիլազա 60ml	տուփ	12480	12 480	1	Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15	Համաձայն պատվերի	Մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների համար

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա այնուհանդերձ ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ԳՆՈՐԴ

<< Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>>ՓԲԸ
Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկ>>ՓԲԸ,Նոյեմբերյանի մասնաճյուղ Հ/Հ 220155140084000
ՀՎՀՀ՝ 07404792

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

"Վիոլա" ՍՊԸ
ՀՀ ք.Երևան,Ավան Աճառյան փող. 2-րդ նրբ. թիվ3
" Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026
Տնօրեն՝Ա.Մեժլումյան

/ստորագրություն/

Հավելված N 2
<<27 >>մարտ 2018 թ. կնքված
<<ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/11-2>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33211120	Գլյուկոզայի հավաքածու			3360	6720	10080	13440	16800						16800
2	33211230	Սիֆիլիսի թեստ-հավաքածու RPR կարբոն 100ts			5400	10800	10800	16200	21600						21600
8	33211110	Մեզի անալիզի թեսթ			0	5592	5592	5592	5592						5592

9	33211160	Կրեատինին			4500	4500	9000	9000	13500						13500
10	33211150	Միզանյութի հավաքածու			4590	9180	9180	13770	18360						18360
15	33211190	Ռեագենտ անտի A			475	950	950	1425	1900						1900
16	33211200	Ռեագենտ անտի B			475	950	950	1425	1900						1900
17	33210000	Ռեագենտ անտի AB			575	1150	1150	1725	2300						2300
18	33211220	Ռեագենտ անտի D			830	1660	1660	2490	3320						3320
20	33210000	Հեպատիտ C			2880	5760	8640	11520	14400						14400
22	33211300	Կալցիումի հավաքածու			2760	2760	2760	5520	5520						5520
23	33210000	Ալբումինի հավաքածու			4560	4560	4560	9120	9120						9120
24	33210000	ALS հավաքածու			1740	1740	1740	3480	3480						3480
25	33210000	AUS հավաքածու			1740	1740	1740	3480	3480						3480
27	33211130	Խոլեստերոլ HDL 50մլ			0	4992	4992	4992	4992						4992

30	33210000	Т4 -Թիրոքսին			0	23880	23880	23880	23880							23880
31	33210000	ТТГ թիրեոտրոպ հորմոն			0	23400	23400	23400	23400							23400
32	33210000	Т3 -Թիրոքսին			0	23880	23880	23880	23880							23880
33	33210000	Ցիտոմեգալովիրուս			0	26880	26880	26880	26880							26880
34	33210000	Խլամիդիա			0	31920	31920	31920	31920							31920
36	33210000	Ալֆա Ամիլազան			0	12480	12480	12480	12480							12480

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
<< Նիկոլայ Նասիբյանի անվան
Նոյեմբերյանի ԲԿ>>ՓԲԸ
Ք. Նոյեմբերյան, Գ. Նժդեհի 15
<<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ
բանկ>>ՓԲԸ,Նոյեմբերյանի
մասնաճյուղ Հ/Հ 220155140084000
ՀՎՀՀ՝ 07404792

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
"Վիոլա" ՍՊԸ
ՀՀ ք.Երևան,Ավան Աճառյան փող.
2-րդ նրբ. թիվ3
" Ամերիաբանկ" ՓԲԸ
Հ/Հ 1570001092880100
ՀՎՀՀ 00801026

Տնօրեն՝ ----------
/ստորագրություն/
Ա.Մեժլումյան

Հավելված 11
«-ՆԲԿ--ԳՀԱՊՁԲ-2018/-11--» ծածկագրով*
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան 27 Դեկտեմբեր 2018 թ.**

1. <<Վիոլա>> ՍՊԸ-ի, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Արմեն Մեժլումյանի, (Անձնագիր BA 0024191, տրված 29.01.2013, 001), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

2. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է <<Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>> ՓԲԸ____-Ի_____* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից
պատվիրատուի անվանումը
կազմակերպված՝ _____<<ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/ 11 >>_____* ծածկագրով գնման ընթացակարգին:
ընթացակարգի ծածկագիրը

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

3. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ՎԻՈԼԱ» ՍՊԸ, Երեւան, Աճառյան փ. 2-րդ նրբ. թիվ 3
ՀՎՀՀ 00801026
Հ/Հ 1570001092880100 «Ամերիաբանկ» ՓԲԸ

Տնօրեն Արմեն Մեժլումյան _____

Հաշվապահ Սեդա Մարգարյան _____

Կ.Տ.

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[24] N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Վիոլա» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «Ամերիաբանկ»ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ 1570001092880100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 00801026

7. Վճարողի ՀՇՀ՝

8. Շահառու՝ <<Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>> ՓԲԸ

9. Շահառուի ՀԿՀՀ՝ 07404792

10. Շահառուի բանկը՝ <<ԱԿԲԱ_ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ բանկ>> ՓԲԸ, Նոյեմբերյանի մասնաճյուղ <<ԱՇԻԲ>>Նոյեմբերյանի մասնաճյուղ

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 220155140084000-ԱԿԲԱ ԲԱՆԿ
2476800967620010-ԱՇԻԲ ԲԱՆԿ

12. Գումարը թվերով և բառերով՝ 26 870(Քսանվեց հազար ութ հարյուր յոթանասուն)ՀՀ դրամ

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ AMD(ՀՀ դրամ)

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ տուժանք

15. Պայմանագրի ծածկագիրը՝ ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-2018/11-2

16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

[24] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*